

ԲԺԻՇԿ ՏՕՔԹ ԱԵՐՎԻՉԵՆ ԼՓԵՆՏԻ

Գ Ր Ե Ց

ՏՕՔԹ. ՎԱՀՐԱՄ Յ. ԹՈՐԴՈՄԵԱՆ

Ի ԵՒՃԱԿԵԽ ՀԵՄԱԼՍԵՐԵՆԵԽ

ՓԱՐՏ ԶՈՒ



Վ Ի Ե Ն Ե Ա

Մ Ի Ւ Թ Ա Ր Ե Ա Ն Տ Պ Ա Ր Ա Ն

1893.

61 գ.
0-43 թ.

ԲԺԻՇԿ ՏՕՔԹ. ԱԵՐՎԱՉԵՆ ԷՓԵՆՑԻ

22 APR 2013

806

61q.

U-43 p.

15 NOV 2011

Հ Ա Բժիշկ ՏՕՔԹ. ՄԵՐՎՀՉԵՆ ԵԳԻՆՏԻ

9 1 b 8

ՏՕՔԹ. ՎԱՀՐԱՄ Յ. ԹՈՐԳՈՄԵԱՆ

Ե ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ

ФУРБАНТ

1005
101609



ՎԻՃԱԿ


Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Տ Պ Ա Ր Ա Ն


1893.

զ օ թ

Ա Ռ

ՀԱՅ ԲԺԻՇԿՈՒ





ԲԺԻՇԿ ՏՕՔԹ. ՍԵՐԱՀԻՉԵՆ ԷԹԵՆՑԻ



բդի հայ բժշկաց երի-
ցագոյնն եւ նշանաւ-
որը, Տօքթ. Սերվեէն
էքէնտի, Է՛ մին այն
հազուագիւտ անձնա-
ւորութիւններէն, որք
իրենց աննման գոր-
ծերով տոհմային ժա-
մանակակից պատմու-

Կիսադարեան եւ աւելի բժշկական գործունէութեամբ յոդնած, 19^{րդ} դարու հայ բժշկութեան դարագլուխն եւ կենդանի փառքն



եղող այս աննման բժիշկը, երբ իւր կենաց
78երորդ տարեգարձը կ'ողջունէ այսօր, իւր
առոյգ ծերութիւնն հիացումն գրաւելրով, բուռն
փափաք մը ինձ կ'աղջէ գծել իւր համառօտ
կենսագրութիւնը, ի յարգանն՝ իւր բժշկական
այն մեծ համբաւին, որ արդէն փառաւոր յաղը-
թանակներով 53 տարիներու պատկառելի կյա
մը բալրած է, առանց սակայն Յորելեան
հանդէսի. եւ ի պատիւ՝ դարուս հայ բժշկական
հրատարակութեանց գլուխ - գործոցն եղող
իւր այն պատուական Մանկաբանութեան, որ
ընդ հուպ յիմնամեայ յնութիւնն մը կ'ունենայ,
եւ որոյ ընտիր քարոզութեանց եւ ազդու պա-
տուերներուն ամբողջ սերունդներ երախտապարտ
են եւ պարտաւոր:

Տօքթ. Աերդիշէն է Քէհնտի, որոյ անունը
Վլաբռոյի Ժամանակակից Երեւանի Արքոնց կենսագրա-
կան պիեղը բարեպահին մէջ արդէն մեծ
տեղ մը ունի, ծնած է Կ. Պոլսոյ Մուսալլա
թաղը, 1815 թուականին Կյեմքեր ամսուն
մէջ, եւ այսօր կը թեւակոխէ իւր 79 երրորդ
տարին։ Իւր բուն անունն է Աերդիշը Վեհնեան,
որ կիսուելով կամ համառօտուելով, պատա-
հական միացմամբ Աեր եւ Վեհնեան բառերու եղած
է՝ Աերդիշն։²

¹ **S^{te}a** Vapereau, Dictionnaire universel des Contemporains, 5. Edition, Paris 1888, t^e 1661—1662.

² Уѣтѣлѣнъ ашнауанъ сѣлѣніацъ кр. си. ашнауанъ тѣ. вѣдъ
еъ ашнауанъ фома. фома. огъ биръ соръ кѣнъ ашнауакъ биръ
саръ. Уѣтѣлѣнъ тѣлѣнъ сѣлѣнъ 1840 г., нѣгрѣнъ съ
монѣзъ ехъ ами, Сер. Виенъ крѣ, фома. сїлѣнъ сѣлѣнъ
Виенъ.

Խւր պապերը, Փաքք Ասիոյ Հնագոյն գաղ-
թականներէն, շատոնց զոլիս հաստատուած
մեծահարուստ սեղանաւորներ են եղեր. իւր
հայրը համբաւաւոր խոպէլ մըն է եղեր, ընկեր
եւ գործակից զէղջեան խոպէլ Յարութիւն
ամիրային, եւ կը կոչուի եղեր Սարաֆ օղլու
Աղա Վեհէն:

Աղա Վեհվեն, հայր բարի եւ իմաստուն,
թէեւ ոչ ուսումնական, բայց ջերմ ուսումնակը,
մեծապէս հոգ տարած է կրթութեան իւր զա-
ակաց, որոնց եօթներորդն էր Սէրովէտ, եւ կը
կենդանացընէր իւր համանուն վեցերորդ եղ-
բայրը փաղամեռ:

Սերովեէ իւր նախնական ուսումները,
այսինքն մայրենի լեզու, կրօնք եւ պատմու-
թիւն, առաջին անդամ կը սորվի Գումգաբուի
մէջ, Տէր Մերովալ քահանայի մ'աներն եղած
Յարութիւն անուն վարժապետէ մը, բայց յետայ
Գումգաբուէն հրդեհի պատճառաւ Իւսկիւտար
Եւնի Մահալլէ թաղը փոխադրուելով, Սերովեէ
կը սկսի յաճախել նոյն թաղի Ա Կարապետ
եկեղեցւց հին դպրոցը, ուր դասատու կ'ունենայ
Տէր Եփրեմ անուն քիչ շատ ուսումնական քա-
հանայ մը՝ որ դցո՞ն ինչ Փրանսերէն ալ գիտ-
նալով Փրանսերէն կը սկսի սորվեցունել անոր:

Աւերովել ուշիմ եւ խելացի պատանեակ՝
հաղիւ 12 կամ 13 գարուններ տեսած՝ հայերէն
քերականութիւնն եւ կրօնագիտութիւնը մեծ
ջանիւ ուսանելով հանդերձ, կը շարունակէր
սորվիլ ֆրանսերէնը, դաղս իւր հօրմէն՝ որ

աւելի իւր տղըց Յունարէն էլքնէր սորվիլը
կ'ուզէր: Սերովը իւր դասմնկերներուն միշտ
առաջնը, քիչ ատենի մէջ այնպէս յառաջա-
դիմութիւն կ'ընէր, որ ամենուն գովեստներուն եւ
համակրութեանը կ'արժանար: Երթաւաղէմայ
Պօղոս պատրիարքը Պողիս գտնուելով, օր մը
Կարապետ պատրիարքին հետ Ա. Կարապետի
դպրոցն այցելութեան դացած պահուն, կը քննէ
Սերովըն, եւ անոր տուած պատասխաններուն
միշչափ կը հաւնի, որ իւր գոհութիւնն
Հրապարակաւ յայտնելով, բոլոր աշակերտնե-
րուն մէջ անոր Պահպանէն մը կ'ըսէ. պատրիարքի
մը Պահպանիւն աւելի մեծ մրցանակ մը կրնար
ըլլալ այն ատեն աշխատասէր տղու համար:

Ծառ չանցած՝ կը թողուն Խւսկիւտարը եւ
կը փոխադրուին Պալաթիս, ուր մեծանուն Եղե-
կեան պատուելոյն տանը մօտ բնակելով, Սե-
րովը ալ կը սկսի իւր դասերն այս անուանի
Հայկաբանին հետ շարունակել. սորվիլ լաւապէս
գրաբառ շարադրութիւն, պատմութիւն, աշ-
խարհագրութիւն, քիչ մը իտալերէն եւ յու-
նարէն, ինպէս նաեւ ֆրանսերէն լեզու, զոր
խօսողը գրեթէ մատով կը ցուցընեն եղեր այն
ատենները:

Բաց ի իւր աննման Եղեկեանէն, ուսումնա-
սէրն Սերովը 1830ի ատենները բարեպատեհ
առթիւ դասատու կ'ունենայ նաեւ Փարիզու
Էcole Polytéchnique-էն եկած գիտնական ֆրան-
սացի մը՝ որու երկար ատեն աշակերտելով, շատ
բան կը սորվի, մանաւանդ ֆրանսերէն լեզուն

կատարելապէս, եւ ուրիշ օգտակար գիտու-
թիւններ:

Սակայն Սերովը մը սրտին մէջ տակաւ
բժշկական արուեստի ուսման համար մանաւոր
սէր մը կը սկսէր արծաթել. 19 տարեկան էր,
երբ արդէն գրեթէ ուսումնաւարտ Պոլսոյ մէջ,
տեղեակ ֆրանսերէն, իտալերէն եւ յունարէն
լեզուներու, չկրնալով գտնել որեւէ ասպարէզ
մը յարմար իւր Ճաշակին եւ կը թութեան,
կ'որոշէ վերջապէս պարապել բժշկութեամբ,
որուն համար թողլով իւր Հայրենիքը, 1834ին
վերջերը, ընկերակցութեամբ Սինապեան Գաս-
պար պէյի եւ հելլէն Սարանտիի, որ յետոյ ոչ
նուազ քան զինքն նշանաւոր բժիշկներ եղան
Պոլսոյ մէջ, առագ աստաւոր նաւով մը կ'ուզեւ-
որի Մարսիլիա՝ Փարիզ երթալու համար:

Քանի՞ գժուարութիւններ խոչընդունելուն եղան
արդեօք իրեն, եւ քանի՞ անգամներ արդեօք լալ
սկսաւ յանդուզն Սերովըն, մինչեւ որ աղա-
սելով իւր տաժանական Ճամբորդութենէն,
յաղողեցաւ վերջապէս արձանագրուիլ Փարիզու
բժշկական համալսարանը, որուն առաջին հայ
ուսանողն ինքն եղաւ եւ երկրորդը Սինապեան:

Հինգ տարի շարունակ անվհատ աշխատու-
թեամբ շարունակելով իւր ուսանողութիւնը Փա-
րիզու բժշկական համալսարանին մէջ, 1839ին
կը փոխադրուի Իտալիա, իւր ուսումն աւարտե-
լու բիզայի բժշկական համալսարանը, որ այն ա-
տեն ամենէն համբաւաւորն էր եւ գերապատիւը:

Տարի մը յետոյ 1840ին Սերովը Վիչե-

նեան փառաւոր քննութեամբ իւր ուսանողական ընթացքն աւարտելով, կը վկայուի բժիշկ պսակաւոր (diplômé) բիզոյի համալսարանէն, եւ նցն տարւոյ վերջը դարձեալ վերագառնալով Փարիզ, երկու տարիի չափ անուանի՝ բրօֆ. Ուշեւէ եւ բրօֆ. Սիվեալ միզախտաբաններուն հիւանդանոցին մէջ, կը պարապի Թուրքաց (voies urinaires) հիւանդութեանց մասնաւոր ուսումնասիրութեամբ:

Երիտասարդն Տօքթ, Սերովէ Վիշենեան ալ մօտ էր փայլելու. իւր հաստատուն հմտութեամբք, եւ բժշկական անբազզատելի յառաջսդիմութեամբք, շատ կանուխէն կը սկսէր նա մեծ անուն մը ստանալ, Փարիզու մէջ իսկ գնահատուելով Օսմ. գեսպան անուանի Իշշիտ փաշոյէն, մէծն Գոււատ եւ Ալի փաշաներէն՝ որը այնչափ սիրեցին զինքն յետոյ, եւ մղեցին զայն յառաջ, որպէս վայել էր մղել ճշմարիտ տաղանդի տէր, փայլուն ապագայ խոստացող հմուտ եւ կարող բժիշկ մը:

1842ին թողլով Փարիզը, քիչ մը ատեն ալ Անդղիա եւ Խտախա մնալէն յետոյ, բժիշկ Վիշենեան հազիւ 27 տարեկան, կը դառնայ Պոլիս եւ այն ատենի սակաւաւոր հայ բժշկաց, ծերունի Մանուէլ Շաշիեանի, Սիքայէլ Իշտատէնի եւ այլոց համեստ խմբակին մէջ, իրեւ Փարիզեան նոր բժիշկ նշանաւոր տեղ մը դրաւելով, շուտով կը սկսի բարձր դիրք մը ունենալ եւ “Սերվիչէն” անուամբ ճանչցուիլ մայրաբաղարին ամենազգի երեւելիներէն:

Տօքթ. Սերվիչէնի հետ ծիծաղ առաւօտ մը կը ծագէր հայ բժշկութեան, պայծառ արեւ մը մանաւանդ Տաճկաստանի ընդհանուր բժշկութեան, որ ցայն վայր բժիշկ կամ լաւ եւս նէտէ անունը կրող շաղփաղի իտալացիներու եւ բախտախնդիր հրեայներու կյոր տգիտութեան ողբալի մենաշնորհն եղած, նոր կենդանութիւն մը կը զիենուր, նոր օրինաւորութիւն մը եւ պատիւ կը ստանար շնորհիւ այն լուրջ հմտութեան զօր Տօքթ. Սերվիչէն էֆէնտի ունէր իւր արուեստին մէջ իւր հզօր ճարտարութեամբ, Կ. Պոլսոյ հին բժշկութիւնն հիմն ի վեր կը տապալէր, ծիծաղելի դրութիւնները կը չքացունէր, Ճիւրուծ սուվորութիւնները կ'անհետացանէր եւ սիներիմ թշնամնոյ կատաղութեամբ կը հալածէր ու կը սպաննէր բժշկական անուան եւ պատույ նախատինք եղող շաղփաղիութիւններն եւ իմաստակութիւնները, նորանոր գաղափարներու, գեղեցիկ օրէնքներու եղական հեղինակ մը հանդիսանալով. ինչ փառաւոր դարձ, ինչ փայլուն սկզբնաւորութիւն:

Շատ չանցած՝ իւր բարձր արժանիքը կայսերական կառավարութենէն գնահատուելով, բարձրագոյն հրամանաւ կ'անուանի բժշկապետ Կ. Պոլսոյ սպարապետի Պրան:

1846 թուականին կալաթա - Սէրայի բժշկական վարժարանն իւր դռները բանալով անոր, կը յանձնէ իրեն նոր դաս մը բժշկական ուսմանց, Օրինական բժշկութեան (médecine légale) ամենափափուկ ճիւղը, որ առաջին ան-

գամ կ'աւանդուէր վարժարանիս մէջ, առաջին փրօֆէնտօր ունենալով դիտնականն Աերվիչէն էֆէնտի:

Իւր բնածին պերճախօսութեամբը, պիլիսոփայական եւ իրաւագիտական բարձր հմտութեամբը, Փրօֆ. Աերվիչէն էֆէնտի շարունակեց այս ճիւղը գրեթէ անընդհատ 30 տարիի չափ, եւ իրբեւ օրէնսդէտ բժիշկ մեծ հանձար եւ ճարտարութիւն ցոյց տալով օրինական բժշկութեան փափուկ խնդիրներուն մէջ, մինչեւ իսկ Փարիզեան դաստառներու հիացումը շարժեց, ինչպէս կը վկայեն ժամանակակից անձեր եւ օրագիրներ:

Բաց ի օրինական բժշկութեան դասերէն, երբեմն բնագիտական եւ ախտաբանական դասերու հոգն ալ իրեն յանձնեց բժշկական վարժարանը, որոյ շատ բարեկարգութեանց հեղենակ Տօքթ. Աերվիչէն էֆէնտի ինքն եղաւ:

1849ին բարձրագոյն հրամանաւ պաշտօն ունեցաւ հիմնելու ֆրանսերէն լեզուաւ բժշկական թերթ մը, առաջին բժշկական թերթը Կ. Պոլսոյ, որ անմիջապէս սկսաւ հրատարակուիլ իւր իսկ տնօրինութեամբ եւ տեւեց մինչեւ 1852:

1856 Օդոսառու ամսուն Կ. Պոլսոյ կայսերական բժշկական ընկերութեան հաստատման պահուն, անոր գլխաւոր հիմնադիրներէն մին եղաւ Աերվիչէն էֆէնտի եւ քանիցս երկար ատեն մեծ աղդեցութեամբ վարելով այդ ընկերութեան, ինչպէս նաեւ Կ. Պոլսոյ քաղաքային բժշկական բարձրագոյն խորհրդոյն նա-

խագահութիւնը, գրեթէ 40 տարիի չափ ալ շարունակ, բանկալթիի կայսերական զինուորական բարձրագոյն վարժարանին բժշկապետն եղաւ:

1848էն մինչեւ 1849 շարունակ տարիունէս տեւած քոլէրայի ատեն, Տօքթ. Աերվիչէն էֆէնտի, իրբեւ բժիշկ շատ մեծ գեր ունեցած է, եւ 1865ի սոսկալի քոլէրային ժամանակ՝ առողջապահական խորհրդոյն նախագահին ըլլալով, խիստ արդիւնաւոր եղած է, եւ իւր աշխատութիւններն եւ առաջարկութիւններն մայրաքաղաքին բժշկական մարմնէն մեծ պատուով ընդունուած, համաձարակին կարճատեւութեան սատարած են մեծապէս:

1858ին կայս. կառավարութեան հրամանաւ հաստատուած հետինի ժողովոյ քրիստոնեայ անդամներէն էր, Սինապեան Տօքթ. Գասպար Պէյի, Տօքթ. Բարունակ Պէյի եւ Գարաթէուորի փաշոյի հետ. 1876—77 թուականներուն ալ Croissant - rouge ընկերութեան կ. Պոլսոյ ժողովներուն մասնակցելով, ոչ նուալ պարտաւոր ըրած է իրեն այս ընկերութիւնը, ինչպէս նաեւ ամէն բժշկական ժողով կամ միութիւն, ուր Աերվիչէն էֆէնտի առաջին աթոռն ունէր միշտ:

Տօքթ. Աերվիչէն էֆէնտիի ունեցած ամէն մէկ պաշտօնները, իրենց երկար տեւողութեամբ առանձինն մէկ մէծ գրաւական են իւր բարձր տաղանդին եւ բժշկական անբաղդատելի կարողութեան, զօր դեռ աւելի բացատրելու եւ արժանապէս նկարագրելու համար, հարկ է

Սերվիչէն էքէնտիի բժշկական տարիքին հաւասար երկեր շարադրել, հատողներ գրել. բան մը՝ որ տկար գրչիս կարողութենէն շատ եւ շատ վեր է:

Սյսպիսի բարձր պաշտօններով ծանրաբեռնեալ բժիշկն էր, որ հանուր թուղթից բժշկութեան անմոռաց ծառայութիւններ մատուցանելով, եւ կը դարմանէր խուռաներամ հիւանդներ, ճարտար բժշկութեամբ անքուն հսկելով երբեմն անոնց շատերուն մեարգը, եւ իբրեւ խորհրդատու բժիշկ միշտ առաջինն եւ վճռաբանն ըլլալով բժշկական մեծ խորհրդակցութեանց մէջ, իւր անհաւասար ախտաձանաչութեամբ (diagnostic) եւ եղական զարմանագիտութեամբ։ Այսպիսի նախանձելի բազմազբաղացութեամբ վաստակող բժիշկն էր, որ իւր բժշկական պարտականութեանց հետ չէր մոռնար նաեւ իւր ազգը, եւ անօր մարմնական ախտերուն հետ բարոյական հիւանդութեանց ալ հոգածութեալով եռանդագին, “ոռչէ հոյակապ աջակիցներուն անոր բարուրական վլրածունելւան եւ վլրաչան վերակայիշութեան էրդողոյն մէջ մեծ ջանիւ կ'աշխատէր” եւ պանծալէ որդուեամբ էլ պահանջուր, ինչպէս զրած է իմ զրագէտ բարեկամն, հանրածանօթն Ուեթէոս էֆ. Գէրպէրեան, իւր “Գրամ” անուն գեղեցիկ բանախօսութեան “Զօն” մէջ՝ Ազգային քաղաքական եւ ընդհանուր ժողովներու ատենագրութեանց եւ կաթողիկոսական

¹ Տես “Թիւրմ” բան սիստեմին Ո. Յ. Պէրպէտ-
րեանի, Կ.Պոլիս, Տպա. Գ. Պաղտառավեան 1886, էջ գ.:

ընտրութեանց խնդիրներու մէջ իւր անունը
փառաւոր յիշատակներով արձանագրուած է,
եւ ք. Քէշեան էֆէնտիի սիրուն գրչով, կեն-
դանուոյն անմահացած ազգային Ա. Փրկչեան
Հիւանդանոցի պատմութեան մէջ, Ա. Փրկչեան
Հիւանդանոցին այն, որուն գժբախտ վիճակին
համար Տօքթ. Աերվիչն էֆէնտի գրեթէ
փրկարար հրեշտակ մը եղած է ժամանակին,
մանաւանդ 1853, 59, 60, 65 եւ 68 թուա-
կաններուն, մաքրելով զայն շատ անկարգու-
թիւններէ, սրբելով զայն շատ անբարոյական եւ
խժգժական արաբներէ, եւ որչափ կարելի էր,
ժամանակին պահանջից համաձայն՝ վերածելով
զայն նիւթապէս եւ բարոյապէս բարեբաստիկ
վիճակի մը:¹

1853 ԳԵԿՄԵՔԵՐԻ 27ԻՆ ՏԶՔԾ. ՍԵՐ-
ՎԼԵՀՆ ԷՓԵՆՏԻ, ԱԽԵՂՊ ատենապէտ ազգ-
ուսումնական խորհրդոյ, իւր իսկ նախաձեռնու-
թեամբ եւ առաջարկութեամբ յաջողած է ազգ-
չիւանդանոցին մէջ հաստատել երկրագործա-
կան վարժարան մը, որոյ համար այն ատենի
գերագցն ժողովզ ուղղած մէկ նամակը, հրա-
տարակուած արդէն չիւանդանոցի պատմութեան
մէջ, պատմական մէծ կարեւորութիւն մը ունե-
նալով, կ'արտատպեմ հօս ամբողջովին։ Ահա-
ասիկ այն։

“Ազգային գերագոյն ժողովը սուրբ Փրկչին”



Հիւանդանոցին մէջ չորս տարիէ (1849) ի վեր ազգին աղքատ որբ ու անտէրունչ տղաքը կրթելու ձեռք զարկած է: Այս մարդասիրական ու ազգասիրական ձեռնարկութեան նպատակը նշյն տառապեալ մանկանց ապագայ վիճակին լաւութիւնն է: Իրենց տրված այժմեան կրթութիւնը նախապատրաստութիւն մըն է եւ ոչ անմիջապէս այս վիճակին համանելու միջոցը: Այս միջոցը արհեստ մը կամ այն սորվզված գիտութեանց գործադրութիւնը միայն կրնայ ըլլալ: Ուսումնական խորհուրդը մտածելով որ նոյն տղայոց ապագայ վիճակը պատրաստելու ազգային գերագույն ժողովին բարի նպատակը արդիւնաւորել է, խորհեցաւ եւ պատշաճ գատեց որ անոնց մէջէն յարմարագ ցնները ընտրելով, երկրագործութեան ամէն օգտակար ուսմունքը անոնց սորվեցնելու հոգ տարվի, որով վարժարանէն ելենէն ետքը արհեստ մը ձեռքերնին ունենալով կարող ըլլան իրենց ապրուստ ձարելու եւ վերստին խեղճութեան մէջ չվնալու: Յայսնի է որ երկրագործութեան արհեստին մէջ կը պարունակի, պարափղպանութիւնն, այգեգործութիւնն, մշակութիւնն, կենդանաբանութիւնն, մետաքսագործութիւնն, շերամատածութիւնն, եւն, որոնց իւրաքանչիւրն ալ զատ զատ զլնաւոր արհեստներ եւ հետեւաբար ապրուստի դուռներ են: Ասոնք սորվեցնելու համար՝ երկրագործական դլնաւոր դասատուն արդէն Ուսումնական խորհուրդը իւր կողմէն կը նըւիրէ, անոր վարձքին ալ հոգը իւր վրան առնելով, այսինքն առանց

ազգին բեր մ'ըլլալու: Ուստի իր այս օգտակար դիտաւորութիւն ձեր մեծապատւութեան ծանուցաննելով, անոր գործազրութեանը համար ձեր հաւանութիւնը շնորհելիդ կը ինդրէ Կիմաց ուսումնական խորհրդին Խորհրդապէտ Ս. Վ. Էլլունեան: ^{2*}

Հիւանդանոցի երկրագործական վարժարանը երկու տարի միայն տեւեց, եւ չկրնալով տոկալ նորանոր ծախքերու՝ գոցուեցաւ ի մեծ ցաւ ազգին՝ որ իւր գժեադդ որբերուն համար կը նախատեսէր քաղել անկէ մեծ օգուտներ:

Տգթ. Երբիշէն էֆէնտի իրաւամբ պարտաւոր եմք համարել մէկ ամենամեծ բարերարը մեր Հիւանդանոցին, որ գեռ կարօտ է կարօտ շատ բարեկարգութեանց, եւ որոնց վրայ Սերվիշէն էֆէնտի իւր կենաց երեկոյին մէջ իսկ չի գագարիր բնաւ խորհելէ եւ մտածելէ, խրախոյս եւ քաջալեր լինելով առ այս երիտասարդ հայրժիշկներուն:

Այսչափով չի լմնար սակայն Տօքթ. Սերվիշէն էֆէնտիի կարողութիւնները, իրեւ մեծ բժիշկ, հմուտ յունարէն, լատիներէն, ֆրանսերէն, իտալերէն, թբբերէն եւ մայրենի լեզուաց, բաց ի իւր պատմական, իմաստասիրական եւ քաղաքագիտական նուրբ, խորին հմտութիւններէն, որով Ալի եւ Գուատ մեծանուն փաշայներուն եւ այլ երեւելի օսմ, նախարարաց համակրութիւնն եւ մտերմութիւնը վայելած էր, եւ Օտեան, Աղամըն, Կ. Վարժապետեան,

Սիսաբեան, Զօրայեան անզուգական հանձար-
ները զարմացուցած է եւ գերած, Տօքթ. Սեր-
վիչէն էֆէնտի ունի նաև գրական տաղանդ.
գրող-բժիշկ մը եղած է նա, եւ առաջն հայ
գրող-բժիշկը դարսու:

Բժշկական թերթերու մէջ հմտալից
գրութիւններ եւ 1866ի Gazette médicale
d'Orientի մէջ Քուէրա ախտին վրայ ընտիր Խոր-
հըրդածութիւններ հրատարակելով հանդերձ,
ազգային թերթերու եւ հանդէմներու մէջ ալ
կ'երեւար շատ անգամ, բժշկական տեսութիւն-
ներու եւ ընտանի առողջապահական դասերու
ամենալաւ խմբագրութեամբ եւ պյլ ընտիր
յօդուածներով, զօրս երկար կը լինի յիշատակել
հոս մի առ մի:

Իւր ամենէն հօյակապ գործն է Մանկագու-
ծունիւնը, այսինքն՝ ինչպէս կը դրէ ինքը, “Ման-
կանց ինաւագարութեան յարուսէ բնական, բարյական
է ինացական հրահանդը, ” զօր հրատարակած է
գրեթէ կէս դար յառաջ՝ 1844 թուականին:
Դիւրիմաց պարզ ոճով գրուած ընդարձակ եւ
գեղեցիկ գասագիրը մըն է այս առողջապահա-
կան, կամ լաւ եւս, ինչպէս կ'ըսէ Ռ. Յ. Պէր-
պէրեան, ¹ հարց եւ մարց համար աւետարան
մը, որ ըստ Սերվիչէն էֆէնտիի թէեւ հետեւու-
ղութիւն օտար հեղինակներու, բայց տոհմային
գրոշմ կը կրէ եւ յարմար է ճիշդ մեր ընտանի
կեակին: Դարսու առաջն հայ - մանկատա-

¹ Տես “Պէրութու բանախօսութիւն Ո. Յ. Պէրուերէան,
էջ Գ:

ծութիւնն է այս, եւ առաջնոր միշտ պիտի մնայ
յանմահ յիշատակ իւր մեծ անուն հեղինակին,
որ բժշկական ասպարիզին սեմոցը վրայ հազիւ
կոխած, իւր կէտ նպատակին ըրաւ ամէն բանէ
առաջ՝ հայ մանկանց առողջութիւնը, հայ ման-
կանց երանութիւնը, եւ հայ որբոց երջանկու-
թիւնը: Աւրիշ առթի վերապահելով գծել ըն-
դարձակ տեսութիւն մը այս յոյժ շահեկան աշ-
խատութեան վրայ, կը բաւականանամ ներկայա-
ցունելով հոս միայն անոր յառաջարանը, որ գոր-
ծին ամրողութեան գաղափարը կրնայ տալ մել:

“Առաջիկայ գիրքը՝ որ կատարելութիւն
առնելու համար հմուտ ձեռքի կարօտ է, իր
մեծամեծ թերթութիւններովը՝ մեծ պիտանութիւն
ունի աղքին հիմակուան վիճակին նայելով:”

“Ասանկ տղայոց համար գրված հրահանգի
մը՝ շատ տարիններէ ի վեր ազգին քաջալաւու-
թեան նախանձաւորները եւ մենք ալ մինչեւ
հիմայ կարող անձերէ սպասելով՝ եւ գիտնալով
որ ասոր կատարելագոյնը դուրս ելլալու դեռ
ժամանակի կարօտ եմք, առ այժմ՝ քանի մը
բարեկամաց յորդորանքը յօժարեցանք եղածին
չափ մէկ հատ մը յօրինել, մինչեւ որ Աստուած
մեղի կատարելագոյնը շնորհէ:”

“Մեզի ծանօթ լեզուներուն մէջ ասոր
ընտիրները շատ հեղինակներէ մինչեւ մեր օրը
տպած խիստ շատ եւ կերպ կերպ գտնըվելով՝
անոնց մէկը թարգմանելու ձեռք զարնէնք նէ,
կարծեմ աշխատութիւնը մեզի թեթեւ ըլլալէն
շատ, մինչեւ հիմա շատոնց ալդուրս ելած կ'ըլլար:”

“Բայց ասոնց մեջէն մէկ հատ մը չիգլուայ որ մեր աղգային վիճակին ու միանդամայն իմ զրութեանս յարմարութիւն ունենար. ուստի ասոնց մէկն ալ թարդմանել չուղելով, մեզմէ գրել յօժարեցանք, բայց միշտ մեղի առաջնորդ բռնելով. հին ու նոր օրինաւոր հեղինակները, ինչպէս Պղատոն, Լօք, Իռուսօ, Տէսէսառ, Հալէ, Հիւֆլան, Տօնէ, եւ այն, որոնց շատ տեղ ալ անունին յիշած եմք:”

“Կը յուսամք որ մեր այս բազմաթերի հեղինակութիւնը հասարակութեանը հաճելի կը լսյ:”

“Հասարակութեանը կը սեմ. վասն զի գիտուններն ու հմուտները ամեն բան գիտնալով, ասանկ բանի մը կարօտութիւն չունին. ուստի մեր գրածն ու աշխատութիւնը անսնց համար չէ, ասկէ կը յուսամ որ գիտնալով մեր նպատակը անոնք ալ չեն արհամարհեր մեր աղգասիրական մէկ տկար աշխատութիւնը:”

“Գիտեմ որ այս գործոյս մէջ անանկ բաներ կան՝ որ պարսաւել ուղող մարդիկ իրենց պարսաւանացը նիւթ կրնան բռնել. բայց անոնք ամէն ալ՝ մարդկային անխորշելի սրխալմունքներէն զատ՝ գիտմամբ եղած բաներ են:”

“Պարսաւելու դիտաւորութեամբ կարդացող մարդը պիտի գտնէ ասոր մէջ շատ տեղ կրկնաբանութիւն, բայց անանկ նիւթերու մէջ՝ որ հասարակութեան շատը անսնց գաղափար չունին. ուստի այն կրկնութիւնները՝ վարժապետի մը համար տալուն պիտի մէջ ալ համարութիւններ են. որ աշակերտին միտքը այն գաղափարին

տրվեցընելու համար մի եւ նյոն բանը քանի մը անդամ կը կրկնէ: Եւ ասանկ կրկնութիւններ կը տեսնէ աւելի ուսումնական բառերուն սահմաններուն վրայ, որ ընտել բառեր չըլլալուն համար առաջկուց անդամ մը սահմանը տրվելէն ետքն ալ անձանօթ կը մընան:”

“Ասանկ պարսաւանաց ալ յանձնառու եղած եմ գիրքս քիչ մը եվլեկէկ օդապակար ըլլալու համար:”

Իւր աշխատութեան մէջ որչափ համեստութիւն կը ցուցունէ Տօքթ. Սերվիչէն էֆէնտի, եւ որչափ խոնարհութիւն, որով առաւել կը փայլի նա իւր ամերող գործերուն մէջ:

Իւր անթիւ գրաւոր աշխատութեանց մէջէն յիշատակութեան արժանի է նաև այն գամբանական ձառը, զըր 1872ին արտասանած է ֆրանսերէն, իւր հանձարի եղքօր Տօքթ. Գաստպար պէյ Սինապեանի գերեզմաննին վրայ, եւ հրատարակած նյոն տարւոց Gazette médicale d'Orientի Հոկտեմբերի թուցն մէջ, ինչ հանձար, ինչ հմտութիւն կը տիրէ այդ հառին մէջ, որ ձառ լինելէ աւելի դաս մըն է այն պարտականութեանց՝ զզս բժիշկ մը իրեւ մարդ՝ ունի առ ընկերն եւառ համարուեստն իւր, որ գամբանական լինելէ աւելի խօսուն արձան մըն է Տօքթ. Սերվիչէն էֆէնտիի անկեղծ զդացմանց եւ կը թութեան:

Տօքթ. Սերվիչէն էֆէնտի իւր բազմաթիւ գործերովը գնահատուած, արժանանալով եւ Օսմ. վեհապան Կայսերաց բարձր գոհունակութեանց, վարչատրուած է Իֆրէիստէ եւ Մէժի-

տէկնէ մեծ պատուանշաններով, եւ երբեմն ընտրուած անդամ՝ Օսմ. Ծերակցտի, յանմառաց պատիւ հայ բժշկական գասուն կ. Պօլսոյ:

Ո՞ր հայ բժշկն է որ պաշափ բեղմնաւոր կեանք մը կրնայ ներկայացունել պատմութեան, ո՞ր հայ բժշկն է որ ունեցած է պաշափ բարձր պաշտօններ եւ մեծ գործեր, որոնց դեռ շատերը կը վրիպին տկար գրչէս:

Տօքթ. Սերվիչէն էֆէնտի բժշկ կրօնասէր, մղեռանդ սիրահար բարոյականի, որոյ ապացոյ է իւր “Քարոյական” անբունին, անուն գեղեցիկ եւ հմտալից աշխատասիրութիւնը,¹ ամուսնացած է կանուխ, պաշտելով սրտի անզուգական ընկերուչի մը, եւ եղած է բարի եւ առաքինի հայր բարեկերթ զաւակներուեւ բարեկերթ թոռներու:

Պաշտող իւր արուեստին, ապրած է եւ կ'ասլրի կատարեալ պատուաւորութեամբ եւ անբասիր ուղղութեամբ, որ ոչ թէ մեծ, այլ ամենայետին բժշկի մը իսկ գլխաւոր յատկութիւնն ըլլալու է. առատաձեռն ինամող որբոց եւ աղքատ հիւանդաց, անձնանուէր հայր մը եղած է իւր բազմաթիւ աշակերտաց, առանց խորութեան կրօնի եւ ազգութեան. հզօր ձեռնտու երիտասարդ բժշկաց, աննախանձ փափառող անոնց յառաջադիմութեան, միշտ վայելած է եւ կը վայելէ հայ եւ օտարազգի բոլոր բժշկաց երկիւղած պատկառանքն եւ յարգանքը.

¹ Այս գործն հրատարակուած 1846ին, բայց 1848ին երկրորդ տպագրութիւն մըն աւ ըլլալով, 1851ին դարձեալ տպուած է երրորդ անդամ ի կ. Պոլսոյ:

ատեցող բախտախնդիր շաղփաղիութեան եւ զաղիր քսութեան, աններոլ կեղծաւորութեան եւ յետադիմական արաբքներու, ճշմարիտ հանձարի եւ արժանեաց անկեղծ գնահատող եւ քաջալեր եղած է. իրմէ վերջը ծնող հայ բժշկաց դրեթէ մեծ մասին գովելից պաշտպանութիւններ ըրած է եւ մեկ քանիին ալ համբաւին եւ գիրքին գրեթէ բոլորովին հեղինակ եղած է:

Ուսումնասէր եւ վաստակասէր, գեռ այսօր իսկ՝ թէեւ գրեթէ ութմնամեայ, քաշուած բժշկական ասպարէղէն, բայց երիտասարդական աշխուժիւ եւ մաքի զարմանալի արթնութեամբ մեծ սիրով կ'ուսանի եւ կ'ուսումնասիրէ ինչ որ բժշկական նորութիւն է, ինչ որ բժշկական յառաջադիմութիւն է:

Խիստ, ամենախիստ՝ օրինաց գործադրութեան մէջ, եղած է միշտ լոտով՝ արդարութեան եւ իրաւունքի ձայնին. ոչ բնաւ երկարաբան, միշտ լակոնալիօս, մեկ խօսքով մեծ ազգեցութիւններ ունեցած է երբեմն եւ բազմերամ ունկնդրութիւններ իւր շուրջը բոլորած երեւելի ընկերութեանց մէջ: Քանի քաղցր է ինձ լսել իւր խօսքերը, վայելէլ իւր անցը խօսակցութիւնը, որ շարունակ լի սիրուն մանրավէպիկներով եւ զրոյցներով, կեանքի մեծ դասեր, պատուական խրատներ կը պարունակեն. քանի քաղցր է ինձ օգտիլ իւր բազմամեայ բժշկական փորձառութենէն, որ արդէն հյակապ էր եւ մեծ, մինչդեռ տակաւին ես ծնած իսկ չէի, եւ զիս ծնող մօրս բերանը կաթ կը հոտէր տակաւին:

Ասեմ. Տօքթ. Սերվիչէն էֆէնտի, որոյ
դեռ նոր քաշուած կենդանագիրը, իրմէ իսկ
ընդունելով պատիւ կ'ունենամ ներկայացունել
հոս այսօր, ամենակարեւոր եւ խիստ հազուա-
գիւտ անձնաւորութիւն մըն է, նշանաւոր թուա-
կան մըն է նա հայ բժշկական պատմութեան
19^ր դարու. օրինակելի, հետեւելի պատուական
անձնաւորութիւն մըն է. Երիտասարդ բժիշկներ,
ալեւորներ իսկ դեռ շատ կրնան օգտիլ անկէ:

Մաղթեմք ուրեմն որ թուզքից բժշկու-
թեան վերածնիչն եղող այս աղդեցիկ եւ մեծ
բժիշկը, որ իւր երկու նշանաւոր բժիշկ-փեսայ-
ներուն, Փրօփ. Տօքթ. Խօրասանձեան էֆէն-
տիի եւ Տօքթ. Փէշտիմալճեան փաշայի հետ
գեղեցիկ երրեակ մը կազմելով արգի հայ
բժշկութեան պատիւը եւ շուքը կը յաւելու,
ապրի, ապրի շատ եւ հասնի իւր հարիւրամեայ
տարիքը, այն կորովով եւ առողջութեամբ՝ որով
ապրեցաւ նա 78 տարի:

Իռակ. Կ. Պողոսյ. 12 Նոյեմբեր 1893:



Հայաստանի Ազգային գրադարան



NL0432334

Գինն Է՝ գր. 1.50

Արտաստպեալ ի “Հանդէս Ամսօթնայէ,,: